

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Խ. ԱՐՈՎԵԱՆԻՆՆ *)

VIII **)

20 մարտի 1837. Դորպատ:

Թանկագին հայրենակից և ընկեր!

Քո փետրուարի 10-ի գրութիւնը այս ամսի 4-ին ստացել եմ, դրանից ես պարզ իմացայ, թէ գրութիւնդ ինչպէս է: Թող քիրտդ չկտորուի, այլ համբերութեամբ և վճռականութեամբ պնդանայ, մինչև ըո ռուս լաւ ասպազայ բացուի: Աւելի վսեմ բան չկայ, ոչ մի տեղ մարդս այնքան մեծ չէ երևում, ինչպէս գերակշռող ոյժի դէմ պատերազմելիս, ընդդէմ ըստ երևոյթին անխուսափելի ճակատագրի կռելիս՝ մի արդար գործի՝ իր արժանաւորութիւնը հաստատելու համար: Արդէն վաղուց ես այդ բոլորը կանխագիտել եմ և համարեա թէ ձեռքբերով շօշափել, ինչ որ դու այժմ հայոց դպրոցի գործերից պատմում ես: Ես դժբախտաբար նոյնպէս եղել եմ մի քանի տարիներ բնութեան այդ զարմանալի արարածների մէջ և ստիպուած եմ եղել նոցա խաղերին մասնակցելու: Հազար շնորհակալութիւն Արարչին և բարեգործ ընկերներին, որ ես մի կերպ չոցա փչացնող հոսանքից աղատուելով՝ բաղդ ունենայ հոգեպէս հանգստանալու կրթուած մարդկանց շրջանի մէջ, թէև իմ ճակատագրի բազմաթիւ փոփոխութիւններից յետոյ:

Որ քո կարծիքով ինձ համար աւելի օգտակար կը լինէր ամբողջ նպատակայարմար դասատուութեան կերպն ու եղանակը, քան առարկաների մի կոյտ, չեմ կամենում բացասել, բայց կարևորութիւնը ինձ ուրիշ բան է պատուիրում: Եթէ ես գիտնական աշխարհում փոքր ինչ նշանակութիւն ունենալ եմ ցանկանում, ապա ես պիտի իմ ամբողջ գործունէութիւնը առաւել-

*) ՏՅս «Մուրճ», № 2.

**) Դերմաներէն բնագրից թարգմանել է պ. Կ. Արովանը:

լապէս մի առարկայի նուիրեմ, ինչպէս որ ես յայտնի չափով պատմութիւն եմ ընտրել, և յետոյ նրա բազմաթիւ օժանդակ գիտութիւնները ջանքով և եռանդով տանեմ. իսկ թէ այս օգտակար կը լինի իմ հայրենիքին, թէ ոչ, համալսարանական օրէնքների համար, որոնց ես պարտաւոր եմ հպատակուել, նըշանակութիւն չունի: Սրա հետ միանում է և այն հանգամանքը, որ ես իմ հայրենիքում ունենալիք ապագայ վիճակիս մասին ոչինչ չգիտեմ. բայց ամեն տեղ որևէ ազդեցութիւն ունենալու համար պիտի ես պատրաստուեմ: Ինձ համար անտանելի կը լինի, եթէ երկրային գոյութիւնս պահպանելն 'ի նկատի ունենալով, ես ստիպուած լինիմ անգէտ մարդոց կամքին հպատակուելու: Այս պատճառով ես լաւ եմ համարում նոյնպէս աչքաթող չառնել այս կարևոր հանգամանքները:

Այն ջնչին օգնութիւնը, որ ես կառավարութիւնից ստանում եմ, հազիւ է կարողանում իմ ֆիզիկական և հոգեկան կարիքներին դոհացնել: Կենցաղավարութիւնս պիտի շատ չափաւորեմ, եթէ ցանկանում եմ իմ բոլոր հարկաւոր գրքերը ձեռք բերել: Շատ տխրալի է, որ իմ մասին ոչ ազգականներս են մտածում և ոչ էլ ընկերներս. մէկը մինչև անգամ գրեց ինձ մի քանի տարի առաջ, որ ես համեստ պիտի լինիմ իմ ընկերներին ուղղած պահանջների մէջ: Ես քեզ պիտի խոստովանուեմ, որ ինձ տարօրինակ է թւում, երբ ես մտածում եմ, որ ինձ օգնելու համար բոլոր քսակները իսկոյն դատարկում են և բոլոր աղբիւրները յանկարծ կտրոււմ: Իմ սրտագին ջերմ շնորհակալութիւնը գերմանացի կրթուած ընկերներին, որոնք ուրիշ կերպ են հետաքրքրւում ինձանով, քան Տփլիսում կամ ուրիշ տեղեր ծնուած մարդիկ: Ինչպէս դու մինչև այժմ առանց պաշտօնի ես, չեմ հասկանում, թէ ես դու մի օտար քաղաքում առանց միջոցների ապրում: Վիլհելմ Կրաուզէն հաղորդեց ինձ, որ քեզ մի պաշտօն են առաջարկել Տփլիսի մասնաւոր դպրոցներից մէկում 100 ռուբլի արծաթով և դու չես ընդունել, բայց ի՞նչու, չեմ ըմբռնում: Ասա ինձ, ուսուցչական քըննութիւնդ տալուց յետոյ դու ոչ մի աստիճան չեմ ստացել. ինչպէս լսեցի, Պարրօտը քո խնդրքի համեմատ քեզ համար մի աստիճան է ուզում ձեռք բերել: Ռուսաստանում մի անգամ այսպէս է. անձնական արժանիքը բանի տեղ չէ դրում: Կարապետ հոգևորականի Վրաստանի արքեպիսկոպոս ընտրուելը վաղուց արդէն Պետերբուրգի լրագրից իմանալով, ես շնորհաւորական գրեցի նրան Տփլիս. բարի եղիր և տեղեկացիր, թէ արդեօք նա ստացել է այդ, թէ ոչ: Ես մի քանի խօսք եմ գրում իշխան Արղուսթինսկիին, նրա կապը կտրած վարձը կամ չափաւորելու և կամ ա-

ւելի գրգռելու համար: Քո տրամադրութեան տակ եմ թողնում այս նամակը ծրարի մէջ նրան յանձնել, կամ ոչ: Դու պէտք չունիս ինձ գերմաներէն գրելու, որովհետեւ ես միայն դրա կարիքը ունիմ: Քո հայերէն նամակը յաճախ շրջում է ամբողջ Դորպատում և ինձ է հասնում միշտ կուսական անարատութեամբ: Նոյն ապահովութիւնը ունի և իմ գերմաներէն նամակը Տփլիսում: որովհետեւ թիւ կարող է այն կարգաւ, թէև մի քանի անաստուածներ թոյլ են տալիս իրենց կարգալու: Նորերս պ. Դիլանովին գրել եմ՝ նրան իմ նոր հանգամանքներին ծանօթացնելու համար:

Ես սաստիկ ցաւում եմ, որ դու մի հայերէն գիրք չթողիր ինձ մօտ, մինչև անգամ հայերէն բառարանն, որի համար ես քեզ այնքան աղաչում էի: դրա տեղ դու կարող էիր իմը եղբօրիցս ստանալ: Ես, ճիշտ է, գրքերի մի մեծ ցուցակ եմ յանձնել դուկտոր Զուբալովին, բայց թէ երբ ես կը ստանամ նրանք, հարց է: Իմ Տփլիսում թողած ոսերէն և հայերէն գրքերը քո տրամադրութեան տակ են, բոլորն էլ եղբօրս մօտ են: Ազատ ժամերին ես թարգմանում եմ ռուսերէն Հերդերի *Ideen zur Philosophie der Geschichte der Menschheit* *) և ուղղելուց յետոյ, հաւանական է, որ կտոր-կտոր տպուի: Ձեր ողջոյնները ստացողները ողջունում են Ձեզ կրկին (ներքի, որ պատահաբար յոգնակի դուրս եկաւ): Վերը յիշեալ Հերդերի գրքի Quinet-ի ֆրանսիական թարգմանութիւնը գնել եմ 30 ռուբլիով՝ նպատակ ունենալով բնագրի և թարգմանութեան համեմատութեամբ սովորել գերմանական մտքերի ֆրանսիականին փոխելը:

Քո մտերիմ և. Նազարեանց

IX **)

28-ին օգոստոսի 1837. Դորպատ:

Օգոստոսի 5-ին ստացայ քո նամակը՝ գրուած յուլիսի 15-ին: Ես շտապում եմ պատասխանելու ոչ նրա համար, որ դու էլ նոյնն ես անում, այլ որ ես հետեւում եմ մի անդիմադրելի հակումի՝ իմ մտքերը քեզ հաղորդելու: Ես չգիտեմ, թէ քո լռութեան պատճառը դէպի ինձ անտարբեր լինելուց էր, թէ՞ մի ուրիշ բանից: Ես քո սրտի ցաւը կոպիտ մարդկանց մէջ չլարզ պատկերացնում եմ: Դորպատը, սիրելիս, քեզ շատ է

*) Մտքեր մարդկային պատմութեան փիլիսոփայութեան տաթիւ:

**) Դերմաներէն բնագրից թարգմանել է պ. Կ. Սերովեանը:

դուրգուրել, դու պիտի այժմ մի ճակատագրի ենթարկուես, որը՝ իհարկէ՝ նախանձելի չէ։ Ժամանակի ամեն ինչ փոփոխող ամենակարողութիւնը, յուսով եմ, որ քո գանգաւորներին էլ վերջ կը տայ։ Իմ ամբողջ գործն ու ջանքը դեռ նոյն սաղմային դրութեան մէջ է. ապագան ցոյց կը տայ, թէ սրանից ինչ դուրս կը դայ կեանքի մէջ։ Քո հաղորդածը հայ հոգեւորականի յիմար հայեացքների մասին լուսեւական եկեղեցու վերաբերմամբ՝ իմ սիրտը երկիւղով լցրեց։ Այսպիսի հանգամանքներում շատ ըզրոյշ պիտի լինել այն մարդկանց հետ յարաբերութիւն ունենալիս, որոնց հոգին յաւիտենապէս կաղապարների մէջ սառել է և ընդունակ չէ բարձրանալու դէպի ճշմարտութիւնը. իհարկէ, դու այժմ ապրում ես մի ողորմելի չինական աշխարհում, ուր մարդիկ իրենց ամեն բանը մոլեռանդաբար մեծ բան են կարծում և արհամարհում են օտարը։ Ինչ թշուառութիւն ապրել այնպիսի մարդկանց մէջ, որոնք մտածելու ազատութիւն չունին, որ մեզ բառիս բոն նշանակութեամբ քրիստոնէութիւնը տուել է. որոնք իրենց կեանքը անասունի նման, նախապաշարումների և մտտիապաշտութեան շղթաներով բռնուած, առանց ինքնագիտակցութեան են անցկացնում։— Եթէ կարելի է՝ յաճախ գրիր։ Ես արդէն վաղուց գիտէի, որ մեզ մօտ կայսրին սպասում են։ Մեր ընդհանուրիս ընկեր Արարատեանցի տիտուլբար խորհրդականի աստիճանին հասնելը ինձ շատ ուրախացրեց, ոչ սակաւ և նրան երկրորդ երեխան, որով Աստուած նրան օրհնել է։ Ջերմ ողջունիր նրան իմ կողմից և շնորհաւորիր նրա բաղձաւորութիւնը։ Ես նրան կը գրէի, եթէ չվախենայի, որ նա ինձ չի հասկանայ։ Նրա նախկին ասածների համաձայն, թէ ինչ են անում այսօրան ժամանակ Դորպատում և թէ վերջապէս ինչ են այսօրան սովորում, նա՝ իհարկէ՝ ինձ մի անգլուխ, անխելք տեղ մարդու է դնում, հետեւաբար և իմ խօսքերը ցնորքներ պիտի համարի։ Ես քեզ հարցրել եմ արդէն թէ ուր է մեր Օհաննէս Անդրէասեան (?) Ամերիկեանը, ինչո՞ւ չես գրում։ Ասա եղբօրս, որ ամեն անգամ քո գրելու ժամանակ գոնէ մի քանի տող ինձ գրի իւր և իւր ընտանիքի դրութեան մասին։ Այս հօ խայտառակութիւն է, միշտ միմիանց համար մեռած մնալ։ Ես մի խնդիրք ունիմ, որը կայանում է նրանում, որ դու պիտի ինձ մի լաւ տեսակի թիրմովա ուղարկես, գինն էլ հետը նշանակած։ Իմ ժամանակ արժէր 8 ռուբլի արծաթ, այժմ արեւի արժան պիտի լինի։ Կայսրի հրամանով այժմ ուսանողները կրում են եռածայր գլխարկ և սուսեր, իսկ ես՝ ոչ. ես ուզում եմ պատճառաբանել, որ դրա համար փող չունեմ և առանց այն էլ բաւական կարիքներ։ Պարբոտը դեռ չէ վերադարձել հիւսիսային հրուանդանից։—

Ինչու չես գրում, թէ ոտճիկդ որքան է, ինչով ես զլխաւորապէս զբաղուած, ինչ է անում պարոն Տէր-Ղուկասեանը: Մնաս բարեւ, թանկագինս, միշտ յիշի՛ր

Քեզ սիրող Նազարեանցին:

X

Գիտնական և մեծապատիւ բարեկամի իւրում խաչատուրայ Ապովեան

Ս. Նազարեան 'ի հեռաւոր վայրացս
ողջոյն յարգանք մաղթէ:

Զգրեալդ վերջին՝ անգիտանամ թէ յճրմէ ամսաթուոյ՝ զի պակասէր այս, ստացեալ անկորուստ՝ թէև զինի բազմաժամանակեայ ակնկառոյց նմա սպասելոյ՝ ոչ զօրեմ թողնուլ զքեզ անպատասխանի, թէպէտ և այսմ խափանարկութեամբ՝ է որ 'ի խուռն բազմութենէ որոց խոկայ և մտածէ սիրտ իմ և է որ 'ի բազմազան անվերջ դեգերանացս 'ի բաւիղ ուսմանց: Առայսօրեւ 'ի վեր ելանեն ոչինչ ընդհատ և բարեկամին պարտականութիւնք՝ որոց բաւարարել ըստ պատկանին ինձ հերձուտելոյս սրտիւ և մտօք փոքր ինչ արդարեւ: Արասցուք որչափ ինչ մանրթէ 'ի ժամուս՝ զես առաւելն այլում ժամանակի թողեալ:

Շնորհակալ եմ բարեկամիդ ընդ հաշտ ակնարկութիւն գիտնականիդ 'ի Հայուսմս 'ի քանակի վաստակ իմ ըստ մասին Հայոցս դպրութեան, ասեմ միայն մերկաբանոց՝ թէև յաւետ կատարեալն ոչ անկարանայր առ յինէն՝ եթէ էր իմ սակաւ մի դիւրութիւն վիճակի մերոյ: Ի՞նչէ սիրելոյդ գիտել՝ եթէ զճոր վաղճան կալաւ փոքրիկ տեսութիւն համաշխարհական պատմութեան իմոյ՝ զորմէ ընթերցեալ ասես յօրագրի Նախարարին Ռուսաստանեայց լուսաւորութեան. և այս փանաքի երկասիրութիւն իմ՝ յանկաւորեալ պիտոյից տղայական մերոց Հայրենակցաց մնայ մինչև յօրս յայս՝ ուր մնայ. վասն զի վեհապապիւ ձեմարանն Ռուսաց անարժան զայն գտեալ 'ի տիպ արձանացուցանելոյ՝ ըստ որում պիտանի Հայոց միայն և ոչ որպէս ասեն՝ der Wissenschaft, welcher sie angeblich huldigen soll *), մատնեալ է խորին մոռացութեան: Ոչ և ոչ մտածին ընաւ անմիտ և խելացնոր ուսումնականքս այսօրեկ՝ եթէ հեշտին ևս էր ինձ երկասիրել գործ ինչ յաւետ ուսումնական, քան զկե-

*) Գիտութեանը, որին նա այսպէս ասած պիտի հպատակուի:

բակուր տղայոցելոց, ինձ ասեմ՝ որում համարձակ են շատ և շատ աղբիւրք պատմաբանական ուսումնականութեան Եւրոպիայ, բայց օգուտ այտի վասն մերայնոց ո՞ր արդեօք: Ընդ այսպիսիս ի վէճ և ի կռիւ մտանել չէր արժան. զի սոքա ոչ 'ի լուսաւորութիւն Հայոց մտաբերեն, այլ միայն յորս ընդունակքն են բազմապատկել յումպէտս զնիւթ Ասիական զուրցաբանութեան՝ զոր ինքեանք առնեն տապ և հուր 'ի սրտի՝ թէպէտ և յաճախ աղճատելով և չարաչար հասկանալով զբնագիրս Ասիական գրչագրաց: Եւ զի՞նչ ապաքէն օտարականաց՝ զառածելոց յիւրեանց սնոտի փառասիրութիւն՝ ընդ մերայնոց լուսաւորութեան, որք և չերազեն անգամ զանձանցն զպիտոյից: Մնոտիանան հայրենասէրք առ մեզ՝ բազումք, այլ գործով և արդեամբք և ոչ մի, վնյ նժա, որ զայսպիսիս մանրամասնաբար կրկուել ուսաւ և գիտէ: Halt das Maul, wenn du dich nicht verderben willst *) 'ի ճահ ելանէ ինձ և ամենայն իմպիսեաց: Կամ թէ ձայն քո եղիցի իբրև զձայն բարբառոյ յանպատի. կամիմ գլխաւորել զտպագրութիւն Հայկազեան ինչ օրագրութեան, կամ լաւ ևս ասացից՝ կամիմ ամբարտակ իմն յարուցանել ընդդէմ խուռն յորձանաց մերոյս կորստեան և բանադատել զմերայինս ճանաչողս լինել անձանց և խելամտիլ կարևոր խնդրոյ մերոյս ժամանակի: Քաջածանօթէ քեզ՝ թէ գրեալ էր իմ յայսմ մասին առ լուսաւորեալ և ազնուամիտ փոխանորդն Կովկասու առ Վորոնցով կոմսն. շնորհակալ եմ առնս այսմիկ, որ ամենայն քաղաքավարութեամբ պատասխանի արարեալ իմոց բանից, խնդրէր իմանալ հաստատապէս ևս՝ եթէ յի՞նչ արդեօք կախէր ցանկութեան իմ՝ որ առ 'ի նմանէ: Պատասխանեցաք 'ի 11-ն ամսաթուոյ օգոստոսի անցելոյ, եթէ կամ էր մեզ լինել իմանալի իմն միջնորդ ընդ Հայս և ընդ Ռուսաստանեայս և սորին աղագաւ 'ի տենչալեացն մեզ տեղափոխիլ 'ի Կովկաս իբրև պաշտօնաւոր ըստ մասին տպագրութեան Հայկազեան օրագրոյն: Յանկայի ապաքէն հաղորդել քեզ զամենայն գրեալս իմ առ այրն պատուական, այլ՝ առ թուլութենէ ձեռացս և բոլոր մարմնոյս—ցայս վայր հասեալ եմ ես 'ի Ղազան՝ ընկճեալ յառանին իմոց տառապանաց—աղաչեմ թողուլ ինձ զայս զպարտիս. զի գործն երկարէ և կարօտի բազում գրութիանս: Յուսամ՝ թէ ոչ անպատասխանի արասցէ զնամակ իմ այրն մեծ՝ մանաւանդ 'ի ժամուս՝ ուր դադարեալէ 'ի պատերազմական իւրոց գործառնութեանց: Առաջին թուղթ նորա ընծայեալ էր 'ի զինուորական բանակէն՝ որ յԱնդի գեղջ. տես դուայտի զընդգրկող

*) Փակիր ձեռք, եթէ չես ուզում փշանալ:

աչա հոգւոյ արժանամեծար ծերունւոյն՝ որում չիք մօտ և հեռաւոր, այլ որ զամենայն ինչ իբրև հարիւրաչեայ իմն արգոս տեսանէ և արժանաւորէ ըստ պատշաճին: Զի՞նչ պարտ էր մըտածել՝ զայսպիսի ընտիր օրինակ օտարաց առաջի նկարելով, զդանդաղկոտ և զամբարհաւած բարուց մերային մեծամեծաց՝ որք առ մոլորութեան մտաց իւրեանց ողորմութիւն մեծ առնել կարծեն՝ ընդ գրելն ումեք քանի մի անպիտան և անվայելիլի տողս: Թողցուք մեռելոցս թաղել զմեռեալս իւրեանց. թողցուք խօսիլ յունկն մեռելոց և բուռն հարցուք շարժել զկենդանիս յօգուտ մեր *)...

Ճեմարանն Ս. Պետերպուրքայ միշտ ընդդէմ յարիցէքեզ և ինձ. և այս բնական իմն. լեզու Հայոց ոչ կարօտի վերստին նորոգութեան, ընդէ՞ր՝ ասեն՝ թողուլ զականաւոր լեզու նախահարց և զհետ լինել յարուցանել և յօրինել դպրական (Zur Literatur erheben) զոսմիկ լեզու ժողովրդեան. միով բանիւ ընդէ՞ր բանալ զաչա ժողովրդեան 'ի տեսանել՝ զոր պարտական էր տեսանել: Եթէ այդ ամենայն սո՛ւտէ և 'ի մոխիր խորտակեցի՝ մինչ բացցուք ընթերցցուք մտադիր զտարեգիրս կրթութեան և լուսաւորութեան ազգաց Եւրոպիայ, այդմ վկայէ ամենայն անձն բանագէտ, բայց ոչ անգէտքս այսօրիկ: Գրեալէ մեր և յայսմ մասին ճառ ինչ 'ի գերմանական լեզու մակագրեալ «Ein Blick auf die Gegenwart und Zukunft Armeniens in geistiger Hinsicht»**) բայց առ վատաբաղդութեամբ մերոյ դատաքննիչք մերոյս Համալսարանի վտանգաւոր զայն տեսանեն որպէս անձանց նոյնպէս և հեղինակին, ուստի և անտպելի: Եւ զայս ճառ հաղորդեցից քեզ առ յապայս: ԶՌուսս ոչ գոյր տեղի դատապարտելոյ միշտ՝ զի ուսումնականք և բանագէտք 'ի Ռուսս միշտ համաձայնին մեզ յազգային իրողութիւնս. այլ միւս գազան չար և պատառող 'ի դարանի կայ՝ որսալ և կլանել զմեզ, բայց գազան անանուն և գողուղի՝ զոր ըմբռնել չիք մարթ: Զբերեզինա գրեալն չիք ընթերցեալ իմ տակաւին. գրեալն նորա՝ համարատուութիւն զիւրոյ ճանապարհորդութենէ՝ տպեալ 'ի մեր Ղազանեան շարագրածս (Ученныя записки Казанс. Университета) հայի միայն 'ի բաղդատութիւն կամ ուղիղ ևս 'ի հաւաքածոյ ոմանց Հայոց ռամկական խօսից՝ հանդիպելոյ ճանապարհորդին 'ի վաղընկեցութեան իւրում ընդ Ասիա: Գոյ համբաւ՝ եթէ այրդ այդ ե-

*) Այստեղ մի կտոր բաց է թողնուած:

Իմք.

**) Մի հայեացք Հայաստանի ներկայի և ապագայի մասին հոգեւոր տեսակէտից:

կեսցէ 'ի Ղազան, ունիլ զաթոռ պարապ պարսկականին: Գլխաւոր հեղինակը Հայոց հնոց և նորոց ժամանակաց գտանին առ մեզ 'ի Ղազան զորս ետու բերել 'ի Ղրիմայ ծախուք տէրութեան. են և իմ աշակերտք վեց, որոց ոմանք աշխատին ժրապուլիս. թէպէտ ինքեանք իսկ տարակուսեալ՝ եթէ որ եղիցի հանդերձեալ վիճակ նոցին: Անուանք իմայնոց են Չերնիշեվ, Ղադիշեվ վերջին դասու, Զայցեվսկիյ և Պերսիդսկիյ երկրորդին, Թէյս երրորդին, Դիմիտրեվսկիյ առաջնոյն. եթէ որ իմ սիրտ 'ի դասատուութեան, և առանց ասելոյ իմոյ, իմաստասիրել չէ գործ: Պաշտօնս պրօֆէսսորի, այլ թոշակս և արտօնութիւնս օժանդակի՝ թէ ում՝ անգիտանամ *)... Անբանք պրօֆէսսորացեալ են 'ի Ղազան որոց մին չէ աւելի քան զիս, միւսն պակաս ևս քան զիս, երրորդն չուսեալ իսկ 'ի համալսարանի իմիք: Ահաւասիկ է արդարութիւն X. յինէն պահանջի աստիճան դոկտօրութեան առ 'ի ստանալ զառաւելն. չէր ինձ արդարեւ դժուարին և զայս բռն 'ի պարանոցէ գլորել. բայց ուր էր հանգիստ և դադար 'ի ձեռաց առնոյն և արտաքին տառապանաց: Երկու աղախինք մեր այնչափ զօրին մինչև հասանել ինձ անձամբ ձեռն 'ի գործ մղել կամ յօգնութիւն ցաւագարեալ կնոջս կամ թէ անօգնական մանկանս՝ զորոյ կամս բազմապիսի և զաղաղակ անդադար առնեղութեամբ օթեանի մերոյ անմարթ էր միանգամայն հեռացուցանել յանձնէ:

Կին քո անմխիթար է՝ ասես՝ 'ի տեղտղդ առ 'ի պակասութենէ գերմանացի բարեկամուհեաց կամ գերմանացի ընտանեաց. նոյն և իմա առ 'ի չգոյէ 'ի մերձի իւրայնոց՝ թէպէտ և հերիք էին առ 'ի սթափութիւն և 'ի Ղազան տունք և ընտանիք գերմանացի պրօֆէսսորաց. այլ զանազանութիւն բարուց և տղոտութիւն քաղաքին՝ ուր առանց իրիվարի անմարթ է յաճախակի առ դուրս ելանել, խափանարկու են վայելուչն կենաց մինչ 'ի սպառ: Այլ զի՞նչ՝ սիրելի. Ein Weib muss seine ganze Welt in seinem Manne finden, mit ihm leben und weben, wie im Geistigen so im Moralischen **): Բայց հնարե՞նէ այս՝ ուր երկոցունց մեր օտարազգի են կանայք՝ անմասն և տգէտ մերոյս ազգային հարազատութեան (nationalité), մերոյս ազգային կենաց և մտածութեան՝ ուստի աղքերանայ որպէս անհատն նոյնպէս և ժողովուրդն: Դնջ խօսեցար և կարի յիւրաւունս՝ ասելով և ես և դու սխալեցաք առնելով մեզ կնութեան աղջիկն եւրո-

*) Այստեղ ևս մի կտոր բաց է թողնուած:

Խմբ.

**) Գինը պիտի իւր ամբողջ աշխարհը իւր մարդու մէջ գտնի, նրա հետ ապրի, նրան նուիրուի, ինչպէս հոգեկանում, այնպէս և բարոյականում:

պացի: Ասեմ քեզ նախ առաջին՝ ոչ իմ և ոչ քոյդ կին ունին արդարացի իրաւունս կոչիլ եւրոպացիս, զի երկոքին իսկ ծընեալ և ուսեալ 'ի խաւար անկեան ինչ հայրենի տան՝ ոչինչ տեսին և ոչինչ գիտեն՝ բայց զիւրեանց խաղալիկս աղջկանց, անմասն ամենեկին յայնմ քրիստոնէական կրթութենէ՝ որ ուսուցանէ անաչառ և հաւասար աչօք հայիլ յամենայն քրիստոնեայ օտարազնեայ և յարգել պատկառանօք զնորայն եղանակ կրօնապաշտութեան, զնորայն բարս և զվարս՝ եթէ չէին միայն ընդէմ ուղիղ և առողջ բանի: Երկրորդ՝ եթէ էին սոքա և ճշմարիտ եւրոպացի և յայնժամ խիթալի էր զանազանութիւնս ազգին. խիթալի էր ասեմ և յոյժ յոյժ, մինչ կամէր ոք կապել զանձն 'ի յաւիտեան ընդ կին օտարազնեայ: Ո՞ր կապ դաշն ևս չդիմայէ զոք առ ոք. լիզու, կրօն, և հարազատութիւնս ազգային, և անտի ծնեալ և հնարաւորեալ համակրութիւնք (sympathien): Ընդէր սիրէ գերմանացի զգերմանացի, իտալացի զիտալացի, Ռուս զՌուս կայլն. վասն զի սոքա ամենեքեան մտածեալ իրրև ժողովուրդք: Einer Geschichte, einer Religion, mit einem Worte, einem moralischen Bildungsgange angehören, und das Resultat dieser Geschichte, dieser Religion, dieses moralischen Bildungsganges ist auch nothwendig so wie das Einzelwesen, so auch das Volk selbst. *) Հարցանեմ ապա զինչ հասարակացէ 'ի պատմութեան մերոյ ազգի և գերմանացւոց. ոչինչ ապաքէն. ուրեմն և համակրութիւնք ոչինչ: Գիտեմ՝ ասացես՝ կրթութիւնն և լուսաւորութիւնն ճշմարիտ ընդունակէ 'ի բաց խորտակել զայդ ամենայն խորոց ազգային. պատասխանեմ, այո՛, բայց ոչ ամենեւեմ: Եւ զայն ասեմ հնար էր միայն գտանել 'ի մէջ խորին գիտնոց և իմաստասիրաց և ոչ տկարամիտ կանանց՝ որոց շատ էր արդարեւ չափել ուղիղ զթզուկ մասնաւոր կենաց իւրեանց՝ առանց թեակոխելոյ յայնոսիկ բարձունս գիտութեանց՝ ուր հոգացեալն փիլիսոփայ բարեաւ մնա ասացեալ արտաքնոյն՝ և երևելեացն 'ի շօշափելին աշխարհի, զննէ միայն զներքինս մարդոյ, որ ոչ զանազանէ ընդ մարդ և ընդ մարդ, այլ տեսանէ զամենեւին համիրաւանս առաջի Աստուծոյ և մարդկան: Ներեա շատախօսութեանս, այլ զոր ասեմս, ասեմ լիովին զփորձ առեալ իրաց աշխարհի: Կարծեմ և դու հաւանեսցես ասացելոցս:

*) Մի պատմութեան, մի կրօնի, մի խօսքով՝ մի բարոյական կրթութեան ընթացքի պատկանել և այս պատմութեան, այս կրօնի, այս բարոյական կրթութեան ընթացքի հետեանքն է անպատճառ ինչպէս առանձին անհատը, այնպէս և ինքը ժողովուրդը:

Ձեռնարկեալ եմ 'ի ժամուս երկասիրել զշարունակութիւնս
պատմութեան Հայոց դպրութեան սկսեալ 'ի բ.-բդ դարէ մին-
չև յաւուրս մեր: Աւարտեալ դպրո՞ծն և յղկեալ զո՞ճ նորան 'ի
տիպ արձանացուցից: Լաւ յոյժ առնէիր յերևան հաւաքել Հա-
յոց գրչագիրս, մանաւանդ պատմականս՝ զոր չեն տպեալ տա-
կաւին վենետիկեցիք և հետզհետէ հաղորդել ինձ՝ զինչ ինչ գը-
տանէին առ քեզ: Մշակութեամբ այդպիսեաց յեւրոպացի լե-
զուս հանդերձ ուսումնական ծանօթութեամբք հնար էր ժամա-
նակաւ պայծառացուցանել զանուն ազգին: Կատարեան զպաշ-
տօն քո արդար խղճիւ և զայսու զանցառու մի լինելո:

ողջունելով զքեզ և զքոյոցինս իմովք և իմայնովք՝
եմ և եղէց
անփոփոխ առ քեզ սիրով և յարգանօք
հարազատ քո
Ս. Նազարեանց.

'ի 10 նոյեմբերի 1845
'ի Ղազան

հասցէն իմ.

Степану Исаевичу
Назарянцу.
Въ Казани.

} Въ старой Горничной,
Въ домѣ инструментника
Булъгина.

Իսկ քոյդ.

Մ Ո Ւ Ր

նուէր օր. N. N.

Լազուր երկնքից շաշով, շառաշով
Մի ասուպ ընկաւ մայր-երկրի կրծքին,
Մենաւոր ասուպ ոսկեվառ շողքով,
Եւ պատռեց երկրի կուրծքը խորագին.
Ընկաւ ու ծածկուեց քարով ու հողով,
Թաւ մամուռ պատեց նըրա շիրիմին.
Եւ տարիք անցան համր շարքերով...